ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 56 80 88, քարտուղարություն հեռ.՝ 59 68 75

№ 27/1188 « 26 » 11 2020 թ.

Ձեր

ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ ՍՊԸ (ՀՎՀՀ 00195768)
ՀՀ Գեղարքունիքի մարզ, Ճամբարակ,
Գ.Նժդեհի փ.շ 103/26
էլ. հասցե՝ greg.greston@yandex.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ոստիկանության և ''Գռեգգռեստոն'' ՍՊԸ-ի միջև 24 մարտի 2020թ-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՇԵՆՔ-2020/Ա-36 ծածկագրով շենքերի, շինությունների ընթացիկ պահպանման և նորոգման ծառայությունների գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում ''Գռեգգռեստոն'' ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները չի կատարել:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ծառայության մատուցման ժամկետը խախտվել է::

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 7.9-րդ

կետը՝ ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և ''Գռեգգռեստոն'' ՍՊԸ-ի միջև 24,03,2020թ-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՇԵՆՔ-2020/Ա-36 ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

''Գռեգգռեստոն'' ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը՝ պայմանագրի ապահովում և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲ ընկերություն՝ տուժանքի համաձայնագրով սահմանված գումարը՝ 1 000 000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ, և տուժանքի համաձայնագիրը՝ որակավորման ապահովում և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲ ընկերություն՝ տուժանքի համաձայնագրով սահմանված գումարը՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Հարգանքով՝
Պետ, ոստիկանության գնդապետ ***Ա.Ներսիսյան***

Կատարող՝ Բ.Փահլևանյան
Հեռ. 50-39